

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Այսօր, երբ ի լոյս կ'ընծայենք սոյն հեռագիրը զոր Նորին Ս. Օ. Տ. Տ. Գեորգ Հայրապետը դրած էր 21 Ապրիլին եւ զոր այնքան ուրախացուցած էր խանդավառած էր զմեզ, կրկնապէս կը յուզէ ու կը սքսմեցնէ. վստեղի ոչ եւս է Ամենայն Հայոց Հայրապետը: Արդեօք կը նախազգար երանաւորն Հայրապետը իր մօտալուս վախճանումը երբ կը գրէր «ՈՐԷՆ Է՜, Է՜՛՛ ՏԷՐԷ Է՜-՛՛՛»:

Երեւան, 21 Ապրիլ 1954

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՍՈՒՐԷՆ ԵՊՍ.

Պատրիարքարան Հայոց, Երուսաղէմ,

Այսու յայտնում ենք Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Ամենայն Հայոց Հայրապետութեան եւ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան բոլոր քեմերի Առաջնորդներին եւ համայն Հայութեան, որ որոշել ենք, երբ Տէրը կամենայ, 1954 թուի Սեպտեմբերի 26 վարազայ Սուրբ Խաչին կատարել Սրբալոյս Միառնի Օրհնութիւնը: Պատկերում ենք հայ միասնական Եկեղեցու բոլոր Եպիսկոպոսներին եւ Հայրապետական քեմի բոլոր Առաջնորդներին գալ Սուրբ Էջմիածին եւ մասնակցել հանդէսին, ինչպէս նաեւ սփիւռքի տասնեակ քեմերից եւ Սուրբ Երուսաղէմից ու Պոլսի Պատրիարքարաններից ընտրել տալ մէկական աշխարհիկ պատգամաւոր եւ բերել: Եկողների վիզայի համար կարելու տեղեկանքի մասին շատ հաղորդել վիզա ստանալու համար: Հայրապետական Կոնդակը, շրաբերականը եւ այլ կարելու տեղեկանքներ շուտով կ'ուղարկուեն:

ԳԵՈՐԳ Զ.

Կաթողիկոս Ամենայն Հայոց

Երեւան, 6 Մայիս 1954

Երուսաղէմ, 7 Մայիս 1954

Գերաւորն

Տ. ՍՈՒՐԷՆ ԵՊՍ. ՔԷՄԷԱՃԵԱՆ

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Վասն Տեղապահի Ս. Արուստ
Երուսաղէմ

Էջմիածին

ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԵՆՐՈՒՆ, ԲՈԼՈՐ ԹԵՄԵՐՈՒՆ, ՀՈՎԻՒՆԵՐՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՅՑ,

Նորին Ս. Օծուրիւն Գեորգ Զ. Ամենայն Հայոց Կաթողիկոսին առողջութիւնը վաւարացած է: Մասնագէտ բժշկներու տեղեկագրին համաձայն Նորին Սրբութիւնը կը տառապի սրտի եւ ստամոքսի տարուքներէ: Ներկայիս ան կը գտնուի ակնաւոր բժիշկներու խնամքին ներքեւ: — Կը բելադրենք բոլոր Հայ Եկեղեցիներուն աղօթել Վեհափառին բժկութեանը համար:

ԳԵՐԱԳՈՅՆ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Ձեր հեռագրէն խորին անկուրքամբ տեղեկացանք Նորին Սուրբ Օծութեան մահադիւց տարուքեան մասին: Մասնաւոր մաղթանք պիտի կատարենք Ս. Յակոբայ Մայր Տանարին մէջ, ամեն օր, մինչեւ վեհափառի ապաքինումը: Բոլոր Միաբանութիւնը վերջումով եւ տաղանապալից լուրերուն վրայ: Հանեցէք մեզ շարունակաբար տեղեկ պահել Նորին Սրբութեան առողջական վիճակի մասին:

ՍՈՒՐԷՆ ԵՊՍ. ՔԷՄԷԱՃԵԱՆ

Վասն Տեղապահի Ս. Արուստ

Հ Ե Ռ Ա Գ Ի Դ Ե Ը

Երևան, 16 Ապրիլ 1954

Նորին Սուրբ Օծուրին

ԳԵՌԴ Զ.

Կարողիկոս Ամենայն Հայոց

Էջմիածին

Ձատկույն չունի առիթ ի դիմաց Միաբանության եւ համայնքին կը ներկայացնենք մեր յարգալի բնորոշությունները Ձեր Ս. Օծուրեան, մաղբելով Ձեզ երկար կեանք, եւ յաշողութիւն եկեղեցւոյ, Հայրենիքին ու սիրեցեալ ժողովուրդին:

ՍՈՒՐԷՆ ԵՊՍ. ՔԷՄԼԱՃԵԱՆ
Վասն Տեղապահի Ս. Արսոյ

Երևան, 16 Ապրիլ 1954

Նորին Վանուրին

ԳԱՆՈՒՍ ՊԷՑ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ

Լիզպոն

Մեր Փրկչին Ս. Յարութեան թոյն առիթ կը ներկայացնենք Ձեր վանութեան մեր բնորոշությունները, մաղբելով Ձեզ առողջութիւն, երջանկութիւն եւ յաշողութիւն:

ՍՈՒՐԷՆ ԵՊՍ. ՔԷՄԼԱՃԵԱՆ
Վասն Տեղապահի Ս. Արսոյ

Լիզպոն, 17 Ապրիլ 1954

Գերաւորն

Տ. ՍՈՒՐԷՆ ԵՊՍ. ՔԷՄԼԱՃԵԱՆ

Վասն Տեղապահի Ս. Արսոյ

Երևան, 17

Շնորհակալութիւն Ձեր հեռագրին համար: Լաւագոյն մաղբանքներ Ձեզի եւ Ձեր յարգալի Միաբանութեան:

ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ

Ե Կ Ե Դ Ե Ց Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● ԵՂ. 25 Մարտ. — Իրիկուան «Եկեղեցւոյն» քարոզիչ Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան, բնարան ունենալով «Հոգի է Աստուած եւ երկր-պագուայ նորա հոգւով եւ հշմարտութեամբ պարտ է երկիրպագանել» (Յովհ. Գ. 24): Ազօթքը պէտք է ըլլայ հոգիով. շատերը շրթունքով լոկ կ'աշ-թեն: Այսպիսի կեղծ ազօթքներ բնական է որ անխելի մեան Աստուծով:

● ԵՐ. 27 Մարտ. — Վաղուան Տնտեսի կի-րակիրն առթիւ, կէսօրէ վերջ, Գեր. Տ. Նորայր Եպս. Պողոսեանի զխաւորութեամբ, Միաբա-նութենէն մաս մը, ինքնաշարժերով մեկնեցաւ Ձիթենեաց լեռը: Համարձման Սրբալայրին մէջ կառուցուած մեր վրանամատարն մէջ կատար-ուեցան երեկոյեան ժամերգութիւնը, կիրակ-մուտքն ու վաղուան նախատանը, նախազան-թեամբ Հանդիսացեալ Սրբազանին: Կարճ դադարէ մը ետք կատարուեցան Հանդիսաւոր «Եկեղեցւոյն» «Հօգուած» ու ապա առաւօտեան ժամերգութիւն եւ Ս. Պատարագ. ժամարան էր Հոգ. Տ. Կիրիզ Արդ. Գարիկեան: Կէսգիշերին, Միաբանութիւնն ու ներկաներ վերադարձան Մայրավանք:

● ԿԻՐ. 28 Մարտ. — Տնտեսին: Առաւօտուն, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի զխաւորու-թեամբ, ամբողջ Միաբանութիւնը ինքնաշար-ժերու շարանով մը բարձրացաւ Ձիթենեաց լեռ ու «Հրաշափառ»ի հանդէսով մուտք գործեց Համ-բարձման սրբատեղին, որու ուխտի արարողու-թենէն ետք, մեր վրանամատարն առկ մատու-ցուեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը: Ժամարան էր Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէ-սեան, եղիկը պատահական խոյրով: Քարոզիչ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, բնարան ունենա-լով «Աստուած աղբիւրն է կեանքի, լոյսի, ու-րախութեան եւ վրկութեան»: Բացատրեց թէ զրամը կամ հարստութիւնը, որ ընկերային կեանքի ամենակարեւոր ազդակներէն մին է, պէտք է լինի ոչ թէ նպատակ՝ այլ միջոց միայն: Ըլլալու համար բարի ոյժ մը՝ բարոյական նպա-տակներու իրագործման համար: Անդրադառնալով Տնտեսի աւետարանական առակին, բառ թէ Համբարձման լեռը այն վայրն է, ուր մեր Տէրը Քրիստոնէական կրօնքի տնտեսներ նշանակեց իր աշակերտները:

● ԵՐ. 3 Ապրիլ. — Ս. Քառասուն մանկանցն Սեբասիոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Դիտարի մատարն մէջ, ժամարան էր Հոգ. Տ. Պարգե Վրդ. Վրթանէսեան:

— Վաղուան Դատաւորի կիրակիրն առթիւ, կէսօրէ վերջ, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհա-նեանի զխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրա-շափառ»ի հանդիսութեամբ մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար: Պատանաւորուեցան Ս. Գե-րեզմանին եւ Գիւտ Խաչի այրին ուխտեղէն ետք: Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ կատար-ուեցան երեկոյեան ժամերգութիւն, կիրակմուտք

և նախատեսակ, նախադատութեամբ Հանդիսապետ Գեր. Ս. Հոր, Արարողութեանց աւարտին, Միաբան Հայրեր շքերթով վերադարձան Մայրափանք: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբաանդեաց այցելութեան հանդիսաւոր թափօրը, որ վերջացաւ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

● Կիր. 4 Ապրիլ. — Դատաւորին: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտօնեցաւ ի Ս. Լուսաւորիչ, կարճ զապարէ մը ետք մատուցուեցաւ օրեւան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: Ժամարարն էր Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան: Ս. Պատարագէն ետք, Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանաւորաւոր շուրջ կատարուեցաւ երբազարձ մեծահանդէս թափօր, հանդիսապետութեամբ Գեր. Պատարագի Սրբազանին: Ս. Գերեզմանի զրան կարգէն ետք, Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ փակուեցաւ մօտ 6 ժամեր տեւող հանդիսութեանց այս շարքը, յորմենեակ Միաբանութիւն, ուսանողութիւն և ժողովուրդ հանդիսաւոր գնացքով վերադարձան Մայրափանք:

● Ել. 8 Ապրիլ. — Իրիկուան «եկեղեցէի» քարոզից Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան, քնարան ունենալով Քրիստոսի փորձութեան առկէն «երթ յետոյ իմ սատանայ» (Մատթ. Գ. 10): Ըսաւ թէ թէկ փորձութիւններով լցեցուն է մերկանքը, սակայն պէտք չէ ընկճուիլ անոնցմէ. ցոյց տուաւ դանոնք յաղթահարելու միջոցները, որոնց գլխաւորն է աղօթքը:

● Ուր. 9 Ապրիլ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան նախատեսակը պաշտօնեցան Մայր Տաճարին մէջ, նախադատութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան:

● Եր. 10 Ապրիլ. — Ս. Գրիգորի Լուսաւորիչն (Չարդաբանայ եւ ման ի վիրապ): Առաւօտեան ժամերգութեան ետք, ձեռամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի, Ս. Գրիգոր Լուսաւորիչի մատուցը իր հանգստարանէն հանդիսաւորապէս փոխադրուեցաւ Աւագ Սեղան: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Ստեփանոս մատրան Ս. Լուսաւորիչի խորանին վրայ: Ժամարարն էր Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Աւանեսան:

● Կիր. 11 Ապրիլ. — Գալսեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետ: Ժամարարն էր Հոգ. Տ. Միւսոն Վրդ. Կրճիկեան, քարոզից Գեր. Տ. Նորայր Եպս. Պողոսեան, քնարան ունենալով Սաղմոսաց գրքէն «Լոյս տուր Տէր աչաց իմոց. զի մի երբեք չեղջեցիք ի մահ» (Սաղմ. թիւ 4): Ո՛ր միայն Սաղմոսերգուն, այլեւ բովանդակ մարդկութիւնը, բոլոր ժամանակներուն մէջ, զղացած են կարօտը այդ Լոյսին, որ տարբեր է մեր զիտցած սովորական լոյսէն, և ունեցած են յախտան ապրելու տենչանք մը: Երեկ տեսնելիք յիշատակը Ս. Գրիգոր Լուսաւորիչին, որ Լուսաւորից մեր ժողովուրդը այդ Լոյսով, ու լալիք զարեւր իրենց բոլոր խժովութիւններով չնային մարել դալն, եթէ կ'ուզենք այդ Լոյսին մէջ մտալ, պարտինք պահել պատուիրանքները

մեր Փրկչին՝ որ Լոյսն է աշխարհի, և ով որ հաւատայ Անոր՝ պիտի չմռնի, այլ պիտի ընդօժանի յաւիտենական կենեքը:

● Ել. 15 Ապրիլ. — Իրիկեացէմին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ մեծ պահոց վերջին «եկեղեցէի» կարգը, Քարոզից Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արարամեան, մեկնարանելով Սերմնացանի աւետարանական առակը, իր քարոզի ընթացքին շեշտելով նաև ապաշխարութեան կարևորութիւնը, մանաւանդ իրրեկ պատրաստութիւն Աւագ Եաթմոյայ և Ս. Չատիկի մօտալուստ տունակատարութեանց:

● Ուր. 16 Ապրիլ. — Ե. օր մեծ պահոց: Առաւօտուն, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ մեծ պահոց յատուկ Արեւազարի վերջին ժամերգութիւնը:

● Եր. 17 Ապրիլ. — Յիւստակ յարութեան Ղազար: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գրիգորի: Ժամարարն էր Հոգ. Տ. Կիրիկ Արեղայ Դարիկեան: Սուրբ Պատարագի ընթացքին, Ս. Թարգմանչաց Վաթարանի բովանդակ աշակերտութիւնը, ինչպէս նաև տարբեր խորհրդ. վարժարաններու հայ ուսանողներ Հաղորդուեցան:

— Վաղուան մարդկազարդի տունին առթիւ, կէսօրէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի ղլխաւորութեամբ, Միաբանութիւնը Հըրաշափառքով մօտեք գործեց Ս. Յարութեան Տաճար, ու Ս. Գերեզմանին վրայ իր ուխտը կատարելէ ետք բարձրացաւ Բ. Գողգոթայի վերնամաստունը ուր կատարուեցան երեկոյեան ժամերգութիւնը, Կիրակմուտքն ու վաղուան մեծահանդէս նախատեսակը: Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը շքերթով վերադարձաւ Մայրափանք: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբաանդեաց այցելութեան հանդիսաւոր թափօրը:

● Կիր. 18 Ապրիլ. — Ծաղկազարդ: Առաւօտեան ժամերգութիւնն ու Ս. Պատարագը մատուցուեցան Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամաստուն մէջ, ժամարարն էր Հոգ. Տ. Չաւէն Արեղայ Զինչիկեան: Յետ Ս. Պատարագի կատարուեցաւ մեծահանդէս թափօր Ս. Գերեզմանին շուրջ, հանդիսապետութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի: Թափօրի ընթացքին կատարուեցաւ «Անդառաւ» թափօրականք ի ձեռքն ունէին արմաւենեաց և ձիթենեաց ռոտեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղպտոց և Ասորոց թափօրները: Կատարելէ ետք Պատանաւորաւորն և Ս. Գերեզմանի զրան կարգիցը, հանդիսութիւնը փակուեցաւ Բ. Գողգոթայի մեր վերնամաստուն մէջ, ժամը 1.30ին, Միաբանութիւն, ուխտաւորութիւն և ժողովուրդի հոծ քաղմութիւն վերադարձան Մայրափանք ու ընդ զխորհուրդ քո զաւրտութեան շարակարգի երգեցողութեան բարձրացան Պատրիարքարան, ուր Գեր. Տ. Սուրէն Սրբազան «Պահպանելով արձակեց ամէնքը:

— Երեկու ժամ ետք, Մայրափանքի մեծ զանգը կը հրաւիրէր ժողովուրդը Մայր Տաճար,

որ զգեցած էր ստանական օրերու յատուկ իր հարիւրաւոր գոյնզգոյն կանթեղներու ու փայփայուն ջահերու ճոխ հանդերձանքը, իսկ բոլոր խորաններն ու արքանկարները ծածկուած էին թանկարժէք վարագոյններով, ժողովուրդի բազմութիւնը լեցուցած էր Մայր Տաճարը և կը սպաւէր արարողութեանց։ Ընթացք կ'առնէն նաղկազարդի մեծահանդէս Անդառառնն ու հոգեզմայլ շարականներով ընդմիջուած երեկոյեան ժամերգութիւնը, ու ապա «Դոն Երանգ»-ի տպաւորիչ կարգը, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի, իսկ Հոգ. Տ. Յակոբ Վրդ. Վարդանեան Աւագ Խորանի բեմէն կարգաց վարագոյններու բացման մասնակցող բարեկրօն հաւատացեալներու անուանացանկը, որուն աւարտին Գեր. Տ. Սուրէն Եպս. «Հոգեաց» մը արտասանեց այն բարեպաշտներու նշանակալից հոգիներուն ի հանդիստ։ Ապա, Հոգ. Տ. Յակոբ Վրդ. քարոզեց, շնչտնջով բարեգործական զգացումները Ազունիէի Ազգ. բուժարանին հանդէպ, բնարան ունենալով «Մի երկնէի, հօտ փոքրիկ, զի հանցեալ Հայր մեր տալ ձեզ զԱրքայութիւն» (Ղուկ. ԺԲ. 32), զայն պատշանցելով Հայ ազգին, որ փոքր է թիւով, և այդ Յոյսով միայն կրցած է ապրիլ, հակառակ իրեն վիճակուած զժպիչի պայմաններուն։ Այսօր խմբուած ենք նորէն այս հրաշակաւոր Տաճարին մէջ բանալու համար խորաններուն ու Տէրունական պատկերներու վարագոյնները ու անոնց խորհուրդով բանալու մեր խիղճը կարօտեալներուն հանդէպ։ Ապա խօսեցաւ Ազունիէի բուժարանին մասին, որ իր գոյութիւնը կը պարտի մեր ժողովուրդի սերտարուխ նուէրներուն ու կոչ ըրաւ ներկաներուն որ առանց սակարկութեան նետեն իրենց լուսաները Տաճարի դռներուն առջև դրուած պնակներուն մէջ, յատկացուելու համար վերոյիշեալ Բուժարանին։ Հոգ. Հայրը իր խօսքը վերջացուց մէջբերելով Աւետարանական պատգամը թէ «Լաւ է տալն քան զառնուլն» և մեծ բանաստեղծին խօսքը որ կ'ըսէ «Կեանքէս ինձի ինչ մնաց, ինչ որ տուի ուրիշին, տարօրինակ, այդ միայն»։

● Բշ. 19 Ապրիլ. — Աւագ երեւոյթքի։ Երեկոյեան ժամերգութիւնն ու Ս. Կոյսի Աւետման հանդիսաւոր նախասօնը պաշտուեցան ի Ս. Յակոբ, նախագահութեամբ Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեանի։

● Դշ. 20 Ապրիլ. — Աւագ երեւոյթքի (Յիւսէփի զոհանքը) եւ Տօն Աւետման Ս. Աստուածածնի։ Առաւօտուն Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեանի զխնարութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Գեթեմանի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Աստուածածնայ Տաճար, ուր մատուցուեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը։ Տիրաւոր Ս. Գերեզմանին վրայ, ժամարան էր Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեան, որ քարոզեց, բնարան ունենալով «Եւ թագաւորութեան նորա վախճան մի՛ լիցի» (Ղուկ. Ա. 33), Բազմաթուական դրաւ Աստուածորդին հիմնելիք թագաւորութիւնը երկրաւոր բոլոր իշխանու-

թիւններուն հետ ու զայն գերազանց գտաւ, որովհետեւ Յիսուսի թագաւորութիւնը չէր այն աշխարհէն, այլ՝ վեր էր անկէ, հիմնուած Ընդլով Որոյ և եղբայրութեան գերազանցօրէն վսեմ գաղափարներուն վրայ։

● Դշ. 21 Ապրիլ. — Աւագ Զօրեւորքի։ Ըստ սովորութեան, Աւագ Երեքշաբթի օրը Ս. Պատարագ կը մատուցուի Ս. Յարութեան բակի արեւելակողմը, Ս. Յովհաննէս Աւետարանչի մատան մէջ։ Այս տարի, Աւետման տունը զուգարկած ըլլալով այդ օրուան, սոյն հանդիսութիւնը յետմագուեցաւ այսօրուան։ Ժամարան էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքանահայր։ Ս. Պատարագէն ետք, ըստ սովորութեան, կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Ս. Յարութեան Տաճարէն ներս, հետեւողութեամբ ուխտաւորներու հոծ բազմութեան։ Թափօրապետն էր Հոգ. Տ. Վարսեմ Արդ. Գապարահան, որ թափօրի խրաքանչիւր հանգրուանին տուաւ բացատրական քարոզներ։

● Եշ. 22 Ապրիլ. — Աւագ Հիմնադրքի (Յիւսէփի Ընթերց Տնանք)։ Առաւօտեան ժամերգութեան ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Աղաշխարհաց»։

— Ժամը 9.30ին սկսան ճաշու և միջօրէի ժամերգութիւնները, ու ապա Մայր Տաճարի աւագ խորանին վրայ մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ, ժամարան էր Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, Բազմութիւն հաւատացեալներ Հաղորդուեցան։

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Սոնալուսայ»ի խորհրդաւոր կարգը, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի, Տաճարը լեցուցած էր ժողովուրդի և ուխտաւորութեան հոծ բազմութիւն մը, իսկ աւագ զբաւած էին օտար բարձրաստիճանի նշաւի բաները։ «Սոնալուսայ»էն ետք, ըստ սովորութեան, Անկիլիքան Գեր. Եպս. Ը աւագ խորանի բեմէն կարդաց Ս. Աւետարան։

— Իրիկուան ժամը 5ին, փոքր թափօր մը, զխնարութեամբ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Պայրամեանի, այցելեց Ս. Հրեշտակապետաց եկեղեցին (Քրիստոսի Ա. Բանտը)։ Զարչաբանաց խորանին և Ս. Երանի առջև կատարուած Աւետարանի ընթերցումներէն ետք, երգուեցաւ «Տարածեալը», յորմհետէ Հոգ. Տ. Կիրակ Սրեպյա Գարեկեան եկեղեցու բակն ու տանիքները լեցուցած ժողովուրդի հոծ բազմութեան խօսեցաւ քարոզ մը, մասնաւորելով իր խօսքը ուխտաւորներուն։ Տուաւ պատմականը Ս. Հրեշտակապետաց վանքին, որ շինուած է քրիստոնէական առաջին դարերուն և միշտ եղած է Հայոց սեղանականութիւնը։ Անդրադառնալով Փրկչին զատուածութեան, Պետրոսի ուրացման և անոր զԷջնումին, ըսաւ թէ առկաք ալ ենթակայ ենք մեղքին։ Սակայն ունինք նաև զգլխումի բուժիլ յատկութիւն, որով կրնանք արքայի մեղքերէն և վերանորոգուիլ։ Քրիստոս գիտէր թէ իր խօսքերը արժէք մը պիտի չներկայացնէին նենգու-

թեմա և ատելութեամբ զրահաւոր կոյր ամբոխին զէմ, ուստի լուս մնաց դատաւորին առջև:

— Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ, տիրապէցելի խորհրդաւորութեամբ սկսաւ «Խաւարման կարգը», նախազանութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի: Կատարուեցան գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները, «Տարածեալ» երգեց ամբողջ ժողովուրդը: «Փառք Ի բարձունքն ետք, Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքայանան քարոզեց Քրիստոսի շարժարանաց խորհուրդին շուրջ, ընարան ունենալով «Լուս գիշեր, մութ գիշեր»: Յոյց տուաւ մինակութիւնը, Իր բարեկամներէն, Իր սիրելիներէն լքուած ընտան տառապանքը Աստուծոյ Որդիին: Եւ սակայն տկարութիւն չէր այդ լքումը, որովհետեւ Գեթեմանին խորհրդանշանն է մարդ-Աստուծոյ յաղթանակին:

● Ուր. 23 Ապրիլ. — Աւագ Ուրբաթ (Յիսասկի խաչելութեան): Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Խաչելութեան կարգը», նախազանութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի: — Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ հանդիսաւոր «Թաղման կարգը», զարմեալ նախազանութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի:

● Շբ. 24 Ապրիլ. — Աւագ Շաբաթ (Ճագարայոց Ս. Զատիկ): Առաւօտուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ առաւօտեան ժամերգութիւն:

— Ժամը Տ. 30ին, Աւագ Թարգման Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Առաքեալն, ընկերակցութեամբ Հոգ. Հայրնու Ս. Գարու Սաճարի խաւաղան զանապաններուն, մեկնեցաւ Ս. Գարու թեմայի Տաճար, կատարելու համար զրան աւանդական բացումը:

— Ժամը 10ին, Կը հնչէ Մայրաւանքի մեծ զանգը, ու քիչ ետք, երկրորդ թափօր մը, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի զլիսաւորութեամբ մեկնեցաւ Ս. Գարու թեմայի Տաճար, ու մէկ անգամ Ս. Գերեզմանին շուրջ լոնկեայն դառնալէ ետք ուղղուեցաւ Տաճարի մեր Տեսչարանը, ուր Գեր. Սրբազանը ընդունեց մեզի հետեակ Ղպտոց և Ասորաց շնորհաւորական այցը: Ժամը 11ին կատարուեցաւ Ս. Գերեզմանի զրան կնքումը, Հոյց և Յունաց Հոգ. Աւագ Թարգմաններուն մեքով: ձիւղ կէսօրին, թափօրի ելաւ Յունաց Միաբանութիւնը, Ս. Գերեզմանին շուրջ երբակի զարմամբ, որուն աւարտին, մեր Լուսանը՝ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքայանան և Յունաց Պատր. Փոխանը ըլլալով Սրբազանը (Ամեն. Ս. Պատրիարք հիւանդ ըլլալով), զգեստաւորեալ մասն Ս. Գերեզման ու քիչ ետք, նուիրական լոյսը զուրս տրուեցաւ Ս. Գերեզմանի քոֆտի բացումը քննելն ու լուսակրներու կողմէ անմիջապէս փոխանցուեցաւ Գեր. Տ. Սուրէն Սրբազանին, որ Իր տեղը զրանած էր Բ. Գողգոթայի մեր վերնատան Ս. Գերեզմանին վրայ նախ զպաշտպանին մէջ: Արարողութիւնը կը հասնի Իր խանդի գագաթնակետին, երբ մէկ կողմէն Գեր. Սրբազանը նուիրական լոյսով կ'օրհնէր վարը խնուած հաւատացեալներու հոծ բազմութիւնը, իսկ միւս կողմէն լոյսը շրջան կ'ընէր Տաճարին բոլոր մասերը: Կը հնչէր Տաճարին հայկական և յունական մեծ ու փոքր զանգերն ու կողմերէն: զուրս տրուեցաւ Ս. Գերեզմանին լոյսը, Գառնի խաւաղան Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքայանան և Գեր. Ս. Սուրէն Եպս. Քէմհանեանի: Ս. Գերեզմանի զրան կարգաւորուեցաւ մեր թափօրները, Գառնի խաւաղան Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքայանան և Գեր. Ս. Սուրէն Եպս. Քէմհանեանի: Ս. Գերեզմանի զրան կարգաւորուեցաւ մեր թափօրները, Գառնի խաւաղան Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքայանան և Գեր. Ս. Սուրէն Եպս. Քէմհանեանի: Ս. Գերեզմանի զրան կարգաւորուեցաւ մեր թափօրները, Գառնի խաւաղան Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքայանան և Գեր. Ս. Սուրէն Եպս. Քէմհանեանի:

— Ժամ մը վերջ, Մայր Տաճարի մեծ զանգը արդէն եկեղեցի հրաւիրած է բովանդակ Միաբանութիւնն ու ժողովուրդի ստուար բազմութիւն մը: Աւագ խորանը փակուած է թանկարժէք, ներբարեւատ ու երկնայոյն Ս. Զատիկի վարդալոյսով: Ընթացք կ'առնեն երկնայոյն ժամերգութիւնն ու ճրագալոյցի արարողութիւնը, ու աւագ խորանին վրայ կը մատուցուի ճրագալոյցի խորհրդաւոր ու յանկուցիչ իրիկնադէմի Ս. Պատարագը: Ժամաբարն էր Հոգ. Տ. Միւսն Վրդ. Կընիկեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ Ս. Զատիկի նախատեսակը, նախազանութեամբ Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեանի, յորմենեմէ Միաբանութիւնը, «Այսօր յարեալ» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ վանքի Սեղանատունը, ուր յետ Գարու թեմայի Աւետարանի ընթերցման կատարուեցաւ Ս. Զատիկի աւանդական ճաշանդանը:

— Ժամ մը վերջ, Մայր Տաճարի մեծ զանգը արդէն եկեղեցի հրաւիրած է բովանդակ Միաբանութիւնն ու ժողովուրդի ստուար բազմութիւն մը: Աւագ խորանը փակուած է թանկարժէք, ներբարեւատ ու երկնայոյն Ս. Զատիկի վարդալոյսով: Ընթացք կ'առնեն երկնայոյն ժամերգութիւնն ու ճրագալոյցի արարողութիւնը, ու աւագ խորանին վրայ կը մատուցուի ճրագալոյցի խորհրդաւոր ու յանկուցիչ իրիկնադէմի Ս. Պատարագը: Ժամաբարն էր Հոգ. Տ. Միւսն Վրդ. Կընիկեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ Ս. Զատիկի նախատեսակը, նախազանութեամբ Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեանի, յորմենեմէ Միաբանութիւնը, «Այսօր յարեալ» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ վանքի Սեղանատունը, ուր յետ Գարու թեմայի Աւետարանի ընթերցման կատարուեցաւ Ս. Զատիկի աւանդական ճաշանդանը:

● Կիր. 25 Ապրիլ. — Ս. Զատիկ: Գիշերային ժամը 2ին, Միաբանութիւնն ու ժողովուրդ արթնեցած են արդէն, ու քիչ ետք, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի զլիսաւորութեամբ, Միաբանութիւնը լուցեալ լապտերներով կը մեկնի Ս. Գարու թեմայի Տաճար: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները մինչև «Հարց» կը պաշտուին Տաճարի մեր Բ. Գողգոթայի վերնատան մէջ: «Հարց»ին Միաբանութիւնը զգեստաւորեալ, վառեալ մամուղէններով կ'իջնէ Ս. Գերեզմանի ատենը, ու հոն ժամերգութիւնը ամբողջացնելէ ետք կը կատարուի երբադարձ մեծահանդէս թափօր: Ս. Գերեզմանին և Պատանատեղոյն շուրջ, հետեւողութեամբ Ղպտոց և Ասորաց թափօրներուն և նախազանութեամբ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի: Ս. Գերեզմանի զրան կարգաւորուեցաւ իւրաքանչիւր Աւետարան ու կատարուեցաւ «Ան-

դատանք» կարճ դադարէ մը ետք, առաւօտեան ժամը 6ին, Քրիստոսի լուսաւառ Քերեղմանին վրայ մատուցուեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը: Ժամարարն էր Գեր. Տ. Նորայր Եպս. Պողոսեան, որ քարոզեց, ընտրան ունեւնալով «Եկեա՛յք և տեսէք զտեղին՝ ուր կայք» (Մատթ. ԻԲ. 6): Քրիստոսի Յարութիւնը, բռաւ, այն պահէն ուր լոյսը կը յաղթանակէ խաւարին և կեանքը մահուան: Հայ աղգը դարերով քալած է այդ լոյսով, բռնած խաչը իրեն զրօշ ու իրեն վաճան, իր էութիւնը խաթարել փորձող ամենաղգի բիրտ ու ժերուն զէմ: Յիսուսի Յարութիւնը մեծագոյն գրաւականն է մեր անմահութեան: Ս. Պատարագի ընթացքին բաղմամբ չաւատացեալները Հաղորդուեցան: Ապա, Ս. Գերեղմանին շուրջ անակի թափօրով ու Քրիստոս յարեաւ չարականի երգեցողութեամբ, մեր Տեսչարանին մէջ վերջ գտաւ աւելի քան 6 ժամեր տեղող Զատեկան այս փառաշուք հանդիսութիւնը: Քիչ ետք, Միաբնակութիւն և Ժողովուրդ շքերթով ճամբայ ելան զէպի Մարաթիան: Հայոց թաղի մուտքին, թափօր Քրիստոս յարեաւ չարականի երգեցողութեամբ յառաջացաւ զէպի Մարաթիան: Ուր բարձրացաւ Պատրիարքարանի լուսադարչուած, մեծ զահլիճը, ուր հանդիսապետ Գեր. Տ. Նորայր Եպս. Ս. Յարութեան աւետիսով և Պահպանիչով արձակեց հաւատացեալ և ուխտաւոր Ժողովուրդը:

— Կէսօրէ վերջ, Մարաթիանքի մեծ բակին մէջ կատարուեցաւ Զատեկան մեծահանդէս «Անդառնալով» կը հանդիսապետէր Գեր. Տ. Սուրեն Եպիսկոպոս, որ զգեստաւորուած էր Մարաթիանքի գանձատան շքեղագոյն հանգրծներով, Ժողովուրդի հոծ բազմութիւն մը լեցուցած էր շրջակայքը: Ինչպէս նաև բակը եղբերող տանիքները, Ս. Աւետարաններու ընթերցումէն և «Անդառնալով» ետք, թափօրը կատարեց շրջանը մեծ բակին և ուղղուեցաւ զէպի Տաճարին արտաքին դռնից, ուր կատարուեցաւ հոգեհանդիսութիւն, հայ աղգի հին թէ Նոր բոլոր ինչեցեցող հոգեոցն ի հանդիսութիւն: Ապա, Մար. Տաճարին մէջ պաշտուեցաւ երեկոյեան ժամերգութիւնը:

● Բշ. 26 Ապրիլ. — Յիւստակ մեղեցող: Գիշերային և առաւօտեան ժամերգութիւններէն ետք, Մար. Տաճարի աւագ խորանին վրայ մատուցուեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը: Ժամարարն էր Պատր. Տեղապահ Փոխանորդ Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմանեան, որ քարոզեց, ընտրան ունենալով «Գիտեմ զի Յիսուս զխաչելեալն խնդրէ, չէ աստ, քանզի չարեաւ՝ որպէս ասաց» (Մատթ. ԻԲ. 5-6): Յարութիւնը ամենէն իշխանակի զրուակն է մեր Տիրոջ երկրաւոր կեանքին: Անով է որ մեզի տրուեցաւ յոյսը յաւերժական կեանքին: Ոմանք, ցաւալի է ըսել, տարակուսանքով կը մօտենան այս մեծ իրողութեան: Եւ սակայն, ինչպէս Պողոս Առաքեալ կ'ըսէ, եթէ Քրիստոս յարութիւն առած չըլլար, ընդունայն է մեր հաւատքը: Յարութիւնը հիմնաքարն է քրիստոնէական կրօնքին: Ապա, իր խօսքը ուղղելով ուխտաւորներուն, յորդորեց

զանոնք որ հոգիով լուսաւորուած ու մեղքերէն թեթեւացած երբ վերադառնան իրենց տեղերը, տարածեն այդ լոյսը իրենց շուրջ, ըսելով թէ արդար «Քրիստոս յարեալ ի մեռելոց»: Մնան նաև հաւատարիմ Ս. Յակոբեանց վանքին՝ որ 15 դարերէ ի վեր սեփականութիւնն ու պարծանքն է մեր աղգին միանգամայն, որպէսզի միշտ վառ մնան բարեգործական զգացումները իրենց սրտերուն մէջ հանդէպ այս Տան՝ որ հիմնուած ու իր գոյութիւնը ապահոված է հայ բարեպաշտ ուխտաւոր հաւատացեալներու արտաբնականութեան վրայ: Ս. Պատարագէն ետք, Մար. Տաճարին մէջ կատարուեցաւ երրորդ մեծահանդէս թափօր, զիստաւորութեամբ Պատարագիչ Ս. Նոր. որ կենաց Փայտի մատունքն ի մեռել կ'օրհնէր Տաճար լեցնող խառնեքամ բազմութիւնը, իսկ Նոգ. Հայրերը ի մեռելն ունէին Սրբոյ մատուցել, թափօրը կանգ առաւ մեծ առեանին մէջ, ուր երգուեցան «Տէր ողորմա՛ն ու ապա ճառապարհ» յատկապէս ուխտաւորաց համար, և Աղօթք վառ հիւանդաց, յորմնհաւ: Քրիստոս յարեաւ չարականի երգեցողութեամբ թափօր բարձրացաւ Պատրիարքարան, ուր Գեր. Տ. Սուրեն Եպս. ուխտաւորներուն ուղղուած իր հրաժեշտի խօսքերով ու ողջերթի մաղթանքերով փակեց Զատեկան տօներու հոգեպարար հանդիսութեանց այս շարքը ու բաշխեց անոնց Ս. Պատարագի նշխարներ:

● Եր. 1 Մայիս. — Տօն Գլխաման Ս. Յովնանեմ Կարապետի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Դիտարի մարան մէջ, ժամարարն էր Նոգ. Տ. Զաւէն Արդ. Զինչիւնեան:

● Կիր. 2 Մայիս. — Նոր Կիրակի (Յուսանեմ Գանասակաց): Առաւօտեան ժամերգութեանէն ետք, Ս. Պատարագ մատուցուեցաւ Մար. Տաճարի աւագ խորանին վրայ: Ժամարարն էր, ըստ ընկալեալ սովորութեան, Խոստովանահայր Նոգ. Տ. Հայրապետ Կրդ. Արարամեան, որ քարոզեց, նիւթ ունենալով եղեկէլէլ մարդաբէրի տեսիլքը: զայն պատշանցելով մեր աղգի ներկայ վիճակին, ցրուած աշխարհի չորս ծագերուն, նմանութեան եզր մը նշմարեց եղեկէլէլ և Ս. Գր. Լուսաւորչի տեսիլքներուն միջև: Եթէ քրիստոնէութիւնը քաղաքականացէ և նրա թաղէս շնորհակց մեր Ժողովուրդին, սակայն ան նպատակ մեր Ոգեկան շէնքի ամրացման, որուն ներքին, գալիք դարերը իրենց բոլոր խոստովաններով փոխանակ ընկճելու ու խախտելու մեր Ժողովուրդը իր հաւատքէն, ա'լ աւելի ամրապնդեցին զինք այդ լոյս հաւատքին մէջ: Ապրիլ 24ը պէտք չէ որ ըլլայ սգատուն մը միայն, այլ նաև թելադրանքի օր մը: Դիւրին է հանդէսներ սարքել և հոսեր խօսել հայ նահատակներու մասին, և սակայն անոնց արդար հոգիները մեղմէ կը սպասեն ուրիշ բան — հետեւի իրենց շաւիղին ու շանտեսի այն վեճ դարապարները, որոնց համար իրենց կեանքը ի սպաս զրին, Ո'վ պիտի ըլլայ մեր Ժողովուրդի եղեկէլէլը, որուն Տէր հարցնէ «Կ'ուզե՞ս որ այս ոսկորները մարմն

առնեն, ի մի հաւաքուին ու մարդիկ ըլլան»։ Եւ ան պատասխանէ «այո՛, Տէր» և աշխարհի ամէն կողմերէն հայութիւնը հաւաքուի իր հայրենիքին մէջ, ուր զերծ ամէն տեսակ օտար բարբերէ ու միակշիւններէ, ապրի իրրի ամբողջութիւն մը, հետո՛ւ ձուլման ու աշխատեման մասնակցներէն, Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրէն Ս. Եպս. Քէմհանեանի նախադաճութեամբ, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն, ի հանդիստ հոգեոյ բիւրաւոր ցանաղացն մերց յընթացս Համալսարանային Պաշտօնադմբ։ Նոյնը կրկնուեցաւ նաև Տաճարի ներքին գաթին մէջ, Երանաշէնոր Տ. Կիրեղ Ս. Պատար. Զոր շիրմին վրայ։ Ապա, զլիսաւորութեամբ Հոգ. Տ. Պարգև Վրդ. Վրթանէսեանի, թափօրը մեկնեցաւ Հին Կրատան և Զամ-Թաղի առժամայ գերեզմանավայրերը, ուր նմանապէս կատարուեցան հոգեհանգստեան արարողութիւններ, հետեւադու թեամբ ժողովուրդի հոծ բազմութեան։

● Ուր. 7 Մայիս. — Ս. Էջմիածնէն ստացուած հեռագրէ մը տեղեկացած ըլլալով թէ Ամնայն Հայոց Հայրապետը ծանր կերպով հիւանդացած է, այս իրիկուն, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ մեկնեցէի մասնաւոր ժամերգութիւն, Գեր. Տ. Նորայր Եպս. յորդորեց բարեպաշտ ժողովուրդը որ աղօթեն Վեհին թանկագին առողջութեան համար. ապա երգուեցաւ «Տէր ռդրմեան ու մաղթանքներ եղան ինչ որ բոլոր թեան ապաքինման ու արեւշատութեան համար։

● Եր. 8 Մայիս. — Վաղուան Աշխարհամատարան Կիրակիի առթիւ, կէսօրէ վերջ, Գեր. Տ. Նորայր Եպս. Պողարեանի զլիսաւորութեամբ, Միաբանութիւնը շէրաշափառեալ մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար ու Ս. Գերեզմանի ուխտէն ետք բարձրացաւ մեր վերնատան մատուռը, ուր կատարուեցան Կիրակմատը, երկնայեան ժամերգութիւնն ու վաղուան հանդիսաւոր նախատեսակը։ Արարողութեանց աւարտին, Միաբանութիւնը վերադարձաւ Մայրավանք, յորմենտէ կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօրը։

● Կիր. 9 Մայիս. — Աշխարհամատարան (Կանաչ Կիւղի)։ Առաւօտեան ժամերգութիւնը կատարուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնատան մատուռին մէջ, իսկ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, ժամարարն էր Գեր. Տ. Նորայր Ս. Եպս. Պողարեան, որ քարոզեց, բնարան ունենալով Վնուր եկեղեցեաւ աղաչեցուց զՏէր, զի օգու փրկեցէ զմեզ ի մեղաց։ Մարդիկ ամէն ժամանակ, առաւել կամ նուազ շափով զոցած են մեղքի ծանրութիւնը իրենց խղճութեան վրայ։ Մաքրուելու համար մեղքերէն, մարգս պէտք ունի միջոցի մը, միջնորդի մը, նախախնամութիւնը տնօրինած է որ այդ միջնորդը ըլլայ Եկեղեցին, Այսօր, Աշխարհամատարան առին առթիւ, անդրադառնալով Եկեղեցիին կատարած այդ փրկարար զերին, Կ'արժէ նաև

անդրադառնալ մեր կեանքերուն, տեսնելու համար թէ ըրած ենք Եկեղեցին միջոց մը, մեր մեղքերէն սրբուելու համար։ Ս. Պատարագէն ետք, Գեր. Սրբազանը նախադաճեց Ս. Գերեզմանի առնանին մէջ կատարուած «Անգառաւունքի, յորմենտէ Ս. Գերեզմանին շուրջանակի թափօրով, մեր Տեաշարանին մէջ փակուեցաւ սոյն հանդիսութիւնը։ Կէսօրուան մօտ, Միաբանութիւնն ու ներկայ ժողովուրդը վերադարձան Մայրավանք։

Պ Ա Շ Տ Օ Ն Ս Կ Ա Ն Բ

● Դշ. 23 Մարտ. — Կէսօրէ առաջ, Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան օղակին գծով մեկնեցաւ Պաղատա։

● Եշ. 25 Մարտ. — Կէսօրէ վերջ, Near East Christian Council Committee for Refugee Workի քարտուղար Mr. A. Willard Jones այցելեց Պատրիարքարան։

● Ուր. 26 Մարտ. — Կէսօրէ առաջ, Գեր. Տ. Պրանտէնպուրկի Գերման Աւետարանական Եպիսկոպոս Գեր. D. Dr. Otto Dibelius այցելեց Պատրիարքարան։

● Կիր. 28 Մարտ. — Կէսօրէ վերջ, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Ասլանեան և Տիար Կարպիս Հինդիան ներկայ գտնուեցան քաղաքիս Լուսերակմաց Նոր Երէց Propst Joachim Weigeltի ձեռնադրութեան իրենց եկեղեցեային մէջ, Զեռնադրիչ Եպիսկոպոսն էր Գեր. D. Dr. Otto Dibelius։

● Եշ. 1 Ապրիլ. — Կէսօրէ առաջ, Ասորի Եպիսկոպոս Գեր. Մար Տիոնիսիոս Ճիրճիս, որ Զատիկեան տօնակատարութեանց առթիւ քաղաքս ժամանած էր, այցելեց Պատրիարքարան։

— Կէսօրէ վերջ, Ֆրանսական Centre Culturelի մէջ, M. Nicolai Michoutouchkineի կողմէ «Տղաւորութիւններ աշխարհի շուրջ համընդհանրութեան մը» նիւթին շուրջ տրուած բանախօսութեան ներկայ գտնուեցաւ Տիար Կարպիս Հինդիան։

● Բշ. 5 Ապրիլ. — Կէսօրէ առաջ, քաղաքիս Բրիտանական Հիւպատոս Mr. A. R. Walmsley, իր մեկնման առթիւ այցելեց Պատրիարքարան և հրաժեշտ առաւ Գեր. Տ. Սուրէն Սրբազանէն։

● Դշ. 7 Ապրիլ. — Կէսօրէ վերջ, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան և Տիար Կարպիս Հինդիան ներկայ գտնուեցան քաղաքիս Augusta Victoria հիւանդանոցի հանդիսատարահին մէջ, Համաշխարհային Առողջապահական Օրուայ առթիւ տրուած հանդիսութեան, որու ընթացքին, Առողջապահական նախարարը լիպակններ բաժնեց ընթացաւարտ հիւանդապահուհիներուն։

— Կէսօրէ վերջ, Ս. Աթոռ ժամանեց մեծա-

նունը գրադեպ-քանաստեղծ Պր. Կոստան Զարեան իր տիկնոջը հետ և հիւրերը եղան Ս. Յակոբեանց Միաբանութեան: Լոգ. Տ. Յակոբ Վրդ. և Լոգ. Տ. Կիրակոս Վրդ. գանձեք առաջնորդեցին Տնօրինական Սրբատեղիները: Յարգելի հիւրերը մեկնեցան թշ. 12 Ապրիլի առաւոտուն:

● Ռ. 16 Ապրիլ. — Կէսօրէ առաջ ժամը 10ին, քաղաքիս Ասորոց եկեղեցւոյն մէջ, Տ. Պէհնամ Կակաուի Գահնայի վարդապետական ձեռնադրութեան ներկայ գտնուեցաւ Լոգ. Տ. Լալարի Վրդ. Ասլանեան, Ձեռնադրող եպիսկոպոսն էր Գեր. Մար Տիմոխիոս ձիւրնիս:

● Ռ. 26 Ապրիլ. — Կէսօրէ առաջ ժամը 11էն սկսեալ, Ս. Զատիկի տօնին առթիւ, Պատրիարքարան այցելութեան եկան, Յունաց Պատր. Փոխանորդը հանգերմ Միաբանութեամբ, Յրանչիակեանց Կիւսթատը հանգերմ Միաբանութեամբ, Լատինաց Պատրիարքարանէն ներկայացուցիչներ, Ղպտոց վանքի Տեսուչը իր հետեւորդներով, Ասորոց հիւրարար քաղաքս գտնուող եպիսկոպոսը իր հետեւորդներով, Լապէշաց Գեր. Եպիսկոպոսը իր հետեւորդներով, Անկիլքան Գեր. Եպիսկոպոսը իր փոխանորդին հետ, Յոյն-Կաթոլիկներու մեծաւորը իր հետեւորդներով, Մարոնիթ Գեր. Եպիսկոպոսը, Լուսեմբուրգեանց երէցը իր փոխանորդին հետ, քաղաքիս Մաթասարիքը, Ընդհ. Ոստիկանապետը, Գայմագամը, Քաղաքապետը հանգերմ Քաղաքապետարանի կազմով, և այլ ականաւոր անձնաւորութիւններ և գիւնուրակներն:

● Դ. 27 Ապրիլ. — Կէսօրէ առաջ ժամը 10ին, ընդառաջելով Յորդանանի Պաշտպանութեան հաւարարի մասնաւոր հրաւերին, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան, ընկերակցութեամբ Լոգ. Տ. Պարզե Վրդ. Վրթանէսեանի, ներկայ գտնուեցաւ Զարքայի մօտ գիւնուրակեան բանակատեղիին մէջ կատարուած Միաբանական լէզէոնի մեծ տողանցքին: Ներկայ էին շատ մը բարձրաստիճան անձնաւորութիւններ, ինչպէս նաև Յորդանանի թագաւոր Ն. Վ. Լիւսէյն Բ., իսկ ժամը 1ին, հրաւիրեալները մասնակցեցան Ամանի գիւնուրակեան բանակատեղիին մէջ տրուած նաչկերոյթին: Ներկայութեան վեհ. Թագաւորին:

● Դ. 28 Ապրիլ. — Կէսօրէ առաջ, Ս. Զատիկի տօնին առթիւ, Միաբանութիւնը, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանի ղրխաւորութեամբ, այցելութիւն տուաւ Յունաց Պատրիարքարանին, Ղպտոց, Ասորոց և Լապէշաց եպիսկոպոսարաններուն:

● Ե. 29 Ապրիլ. — Կէսօրէ առաջ, քաղա-

քիս Ամերիկեան Ընդհ. Հիւպատոս Mr. Roger Tyler այցելեց Պատրիարքարան, ներկայացուցաւ Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեանին իր յաջորդը, նորընտրի Հիւպատոս Mr. Philip P. Williams:

● Ռ. 30 Ապրիլ. — Կէսօրէ վերջ ժամը 5ին, Լոյանտական Ընդհ. Հիւպատոսարանին մէջ, Լոյանտայի Ն. Վ. Թագաւորին ծննդեան տարեդարձին առթիւ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան և Տիար Կարպիս Լինդլեան:

● Եր. 8 Մայիս. — Կէսօրին, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան Պատրիարքարանի զանիւնին մէջ ընդունեց այցելութիւնը Dr. Hans H. Harmsի, World Council of Churchesէն, որուն կ'ընկերանար քաղաքիս Լուսեմբուրգեանց երէցը Propst Joachim Weigelt:

Ս. ԶԱՏԿԻ ՈՒ ԽՏԱՒՈՐՆԵՐ

Լակառակ մինչև այսօր Սուրբ Երկրին մէջ տիրող քաղաքական անորոշ կացութեան, Երուսաղէմ այս տարի ունեցաւ նախորդ տարիներէն աւելի հոծ ուխտաւորութիւն, շուրջ 600 անձ, եկած զխաւորաբար Սիւրիա-Լիբանանէն ու Պալէստին, փոքր թիւով ալ Կիպրոսէն, իրաքէն և մերձակայ երկրներէն:

Թէ՛ ընտելութեան և թէ՛ այլևայլ Սրբալայրեր այցելելու զիրու թիւները տրուեցան իրենց անթերի: Բնակութեան համար, Ս. Աթոռոյ վարչութիւնը ուխտաւորութեան տրամադրեց Սրբոց Թաղմանշաց վարժարանի մէկ մասը:

Մօտ երկու շաբթուայ ուխտաւորութեան ընթացքին, անոնք ներկայ գտնուեցան մեր մ. րոյշ Զատիկեան արարողութեանց և ստացան Ս. Լազարոյթիւն և հոգեւոր մխիթարութիւն: Բաց աստի, առաջնորդութեամբ Հիւրընկալ Լոգ. Տ. Վարուժան Վրդ. Գալարանեանի, և այլ Լոգ. Մայրերու, անոնք ոչ միայն այցելեցին ամբողջ Երուսաղէմի Տնօրինական Սրբալայրերը, այլև Բեթլեհէմ, Երիզով, Մեռեալ ծով և Յորդանան գետ, ուր յատկապէս կատարուեցաւ «Զորհնէքի արարողութիւն: Իսկ վերոյիշեալ Սրբալայրերուն շուրջ հարկ եղած բացատրութիւնները տրուեցան իրենց:

Տօներէն ետք, անոնք գոհունակութեամբ և հոգեպէս կազդուրուած, վերադարձան իրենց տեղերը, Ս. Երկրէն անջնջելի տպաւորութիւններ տանելով իրենց հետ, տեսած ըլլալով Ս. Յակոբեանց ազգապարծան Մայրալմանքը և ալ ազգային Սրբատեղիները:

تصديدها - بطريقه الامن الارثوذكسي مدير المطبعة - الآب زاون شنتيان قطع في مطبعة دير الامن - القدس العدد ٥ - ٤ أبريل - مايو ١٩٥٤

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Zaven Chinchinian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.